

ԲԱՆԱՍՏԵՎԵԱԿԱՆ

ԼՈՒՍԱՒՈՐՁԻ ԱՂԵՐՍԸ

(1915-ին)

— Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
 — Ո՞վ է Որդեակ, այդ այցելուն տարածամ:
 — Գրիգորն է Հայր, Լուսաւորիչը Հայոց:
 — Քող գայ Որդեակ, թող գայ հոս:
 — Հրամմէ, հրամմէ, բազմաչափար Հայրդ Հայոց.
 Ի՞նչ կայ, ինչո՞ւ հոգիդ այդքան է յուզուած:
 — Ո՞հ, Աստուած իմ, մեղաւոր եմ, ներէ ինձ:
 — Դո՞ւն մեղաւոր, դուն սուրբերուն Սուրբը Մեծ:
 — Այո՛, Տէր իմ, մեղաւոր եմ չարաչար.
 Իմ մեղքերուս համար անա
 Իմ զաւակներս անգրթօրէն կը մորթըին.
 Երասխ գետէն մինչեւ ձիհուն,
 Արարաւէն մինչեւ փէշերը Տաւրոսի,
 Զաւակներուս անմեղ արիւնը կը հոսի.
 Անգութ մէկ ձեռք, սուր մ'անողորմ
 Կը փողոսէ իմ զաւակներըս լուսեամ.
 Կը փանդըին ճանարներս ոսկեխորան,
 Խոզեր կ'ընեն սրբութիւններս ոսփի կոխան:
 Եթէ այսպէս ճնորհնուած էր վախճանն Հայոց,
 Ինչո՞ւ ուրեմն Միածինըդ զրկեցիր վար,
 Կանգնել զրէիր սիրքդ դաշին Արարաւեան
 Տանարն անօրէն կնակարկաւ»:

Մէկ կը խօսէր ու մէկ կու լար աղիողորմ
 Լուսաւորիչը պերճ՝ ազգին հայկազնեան,
 Եւ արցունքի շիթերն աղի կ'իջնէին վար,
 Արագածի կանթեղին բոցն հրաւիրելու:
 Զը դիմացաւ Հօր Աստուծոյ սիրքը բարի
 Եւ յուզուեցաւ Աստուածորդին ալ մարդացեալ:
 — Մի՛ լար, Գրիգոր, ձայնեց Հայրը շեշով մ'աղու,
 Ես կը տեսնեմ ամէն բան.
 Քու որդիներդ ի՛մա ալ չեմ անկասկած,
 Քու ճանարներդ՝ սուրբ Տուներ են ինձ ձօնուած,
 Այդ արիւնը, այդ աւերը անհաւեր
 Ես չեմ մոռնար յաւիտեան.
 Դուն մի լինիր յուսանաս,

Մընացորդ մը զնալկներէդ դեռ կ'ապրի
 Կ'ապրի յաւէս կենսունակ,
 Պիտի կրկնեմ անոնց պատգամս տնկելոյի,
 «Անեցէ՛ք եւ բազմացարուք, որդիք Հայկեան,
 Լըցէ՛ք գերկիրդ եւ տրեցէ՛ք յաւիտեան»:
 Անոնց փոխան որ անսրաղ նթեցան
 Տարագրութեան համբաններուն մէջ անվերջ,
 Անոնց փոխան որ Տէր Զորի աւագները ծածկեցին
 Իրենց ներմակ ոսկորներուն բազմութեամբ,
 Անոնց փոխան որ կեր եղան գիւտսիչ
 Թռչուններուն երկնքի,
 Եւ ամենուն որոնք ինկան նահասակ
 Գողգոթայի համբուն վրայ,
 Բայց չուրացան լոյս հաւաստիդ երկնասուր,
 Այդ ամենուն փոխարէն, հաւաստիմդ իմ Գրիգոր, •
 Ես պիտի սամ հայոց սոգգին
 Հազար հազար մանուկներ արեգակէ աչքերով.
 Իմ ամենէն գեղեցիկ, եւ ամենէն խելացի,
 Եւ ամենէն անուշիկ հրեշտակներդ սրբասուն,
 Վարդի թերթով պարուրած պիտի դրկեմ ես աշխարհ,
 Քու ջարդուած զաւակներուդ տեղ անգին.
 Քու սերունդդդ պիտի շահնայ աստղերուն չափ երկնքին»:

Լուսաւորչի տեսում դէմքը փայլեցաւ,
 Ադի արցունքը փոխուեցաւ նոյննեայն
 Ուրախութեան կայլակի.
 Երախսապարտ տեսով ինկաւ ծնրադիր
 Երկինքներու Հօր դիմաց:
 Մինչ Միածինը մեղմիկ բռնեց անոր թեւերէն,
 — Ելի՛ր, ըսաւ, ելի՛ր Հայրիկդ Հայոց,
 Քու զաւակներդ քեզ շահն ու շահ լացուցին.
 Ասկէ յետոյ պիտի ուրախ ըլլաս դուն
 Նոր Հայութեան մը Հայրն ու Պետը Արթուն»:

Ն. Մ.

